**Արձանագրություն N 3**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Ազգային ժողովի շենքի երեք վերելակների մեքենայական սրահների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-24/2 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

25 ապրիլի 2024թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ *Վ.Մամբրեյան, Վ.Թորոսյան, Ն.Հարությունյան, Մ.Սամսոնյան, *Տ.Բաղալյան
Նիստից բացակայում է՝ Տ.Բաղալյանը, Վ.Մամբրեյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

***1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ***

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ | 2130630 |

***2. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին***

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2024 թվականի ապրիլի 25-ին ժամը 16:00-ին:

***3. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունները) և հասցեն.***

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | ք.Երևան, Գյուրջյան փ 58շ բն28 |

*Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի*

***4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը***

| Հ/Հ | Մասնակից | Առաջարկած գինը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | Գնի առաջարկն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | 1775525 | 355105 | 2130630 |

***5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-24/2 ծածկագրով Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից Հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

***6. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

Հրավերի վերաբերյալ 19.04.2024թ ստացվել են հարցումներ և 19.04.2024թ տրամադրվել են պարզաբանումներ:

***7. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման վերաբերյալ***

Հանձնաժողովն ուսումնասիրելով «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ վերջինիս հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:
Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի մասնակից «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ***

25.04.2024թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

8.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ին՝ հայտարարել ընտրված մասնակից:

8.2 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

8.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

**Հանձնաժողովի**

**Նախագահ՝** _____ **Վարդան Հարությունյան**

**անդամներ՝** _____ **Վարդան Թորոսյան**

_____ **Նշան Հարությունյան**

_____ **Մերուժան Սամսոնյան**

**քարտուղար՝** _____ **Հեղինե Թադևոսյան**